ցացեալ, այլ և յագեալ մերձ ի պայթիլ՝ ապա երթային ի պսակ, որ եւ փեսան եւս չկարէր կանգնել ի վերայ ոտից. եւ այս մեծ անօրէնութիւն, որպէս հրամայեալ են սուրբ հարքն մեր։ Եւ Բ օր երթային ի պսակ և զճէհէզն բարձեալ մի մի՝ եթէ զինչ և էր՝ թէ՛ ոսկեղէն և արծաթեղէն, թէ՛ պղնձեղէն և թէ՛ ապրշմեղէն՝ առաջի այլազգացն, որ նոքա տեսեալ զանհամութիւն ազգիս, կանգնեալ ապուշ մնային. եւս և երգօղք քնարաց առաջի երթային երգօք, որպէս վերասացաւ ի սակաւուց։ Զայսոսիկ արգիլեաց նամակ ուղարկեալ յամենայն եկեղեցիսն թէ Յառաջ քան զճաշու ժամուն եղիցի պսակն, և թէ ոք յանդգնի՝ նզովեալ է և զքահանայսն արգիլեմք ի քահանայագործութենէ։ Եւ ոչ ոք էր, որ ընդդիմանայր ազգու հրամանի նորա։

Ե) Եւ զհացն մեռելոցն, որ ուտէին ի գինեծախ տեղիսն, և զայսոսիկ արգիլեաց թէ Գան և ի տուն մեռելոյն ուտեսցեն զհացն։

զ) Եւ ի ժամանակի ինչ հարկեալ ի զբաղմանց՝ նեղացեալ և փախեաւ ի քաղաքէս՝ եթէ պրծուսցէ զինքն. և հասեալ զկնի մեծամեծաց քաղաքիս, բազում աղաչանօք բերեալ զնա ասա, և նա ասացեալ թէ Երբ ես ձեզ անսացի և եկի կատարեալ զխնդիրս ձեր, և ես ձեզանէ մի խնդիրս խնդրեմ, որ այսքան ժամանակ ի ձեզանէ մէկ սիրոյ ընծայ մի չէ գնացեալ ի սուրբ մայրս լուսոյ ի Սուրբ Էջմիածինն. այսուհետև թո՛ղ զանձանակ լիցի։ Եւ զայս արարեալ խորհուրդ ընդ իշխանացն և ինքն թուղթ գրեալ ընդ եկեղեցիսն թէ Ծանիք Զ եկեղեցոյ քահանայք և ժողովուրդք, զի հրամայէ Առաքեալն թէ Ո՞վ ոք որ տնկիցէ այգի և ի պտղոյ նորա ոչ ճաշակիցէ, կամ խաչն արածիցէ. և մի ումեք պարտական. և մեք եթէ ի ձեզ զհոգևորն սերմանեցաք, այսպիսի բանք.